

Խաղամոլության գնահատման Հարավային Օքսի հարցարան (SOGS)

Այցելու _____ Ամսաթիվ _____

Մասնագետ _____ Արդյունք _____

		ԱՅՈ	ՈՉ
1	Երբ մասնակցում եք խաղերի, արդյո՞ք վերադառնում եք մեկ այլ օր՝ ձեր կորցրած դրամը ետ բերելու նպատակով:		
2	Երբևէ հայտարարե՞լ եք, որ խաղում դրամ եք շահել, մինչդեռ իրականում այն կորցրել էիք:		
3	Երբևէ խաղում ծախսե՞լ եք ավելի շատ ժամանակ կամ դրամ, քան նախատեսել էիք:		
4	Երբևէ մարդիկ քննադատե՞լ են ձեր խաղամոլությունը:		
5	Երբևէ ձեզ մեղավոր զգացե՞լ եք, թե ինչպես եք դուք խաղում կամ ինչ է պատահում, երբ խաղում եք:		
6	Երբևէ զգացե՞լ եք, որ ցանկանում եք դադարեցնել խաղը, սակայն ի վիճակի չէք եղել:		
7	Երբևէ թաքցրե՞լ եք խաղագումարի թերթիկները, վիճակախաղի տոմսերը, խաղի դրամը կամ խաղամոլության այլ նշաններ ձեր ամուսնուց/կնոջից կամ զուգընկերոջից, երեխաներից, կամ ձեր կյանքում կարևոր այլ մարդկանցից:		
8	Երբևէ վիճե՞լ եք ձեզ հետ ապրող մարդկանց հետ այն մասին, թե դուք ինչպես եք վարում դրամական հարցերը: Եթե «այո», ապա արդյո՞ք երբևէ այս վեճերը կենտրոնացել են ձեր խաղ:		
9	Խաղամոլության պատճառով երբևէ որևէ ժամանակ բացակայե՞լ եք աշխատանքից կամ դպրոցից:		
10	Խաղամոլության պատճառով երբևէ պարտքով դրամ վերցրե՞լ եք և չեք վերադարձրել:		
11	Երբևէ տանից պարտքով դրամ վերցրե՞լ եք, որպեսզի խաղաք:		
12	Երբևէ պարտքով դրամ վերցրե՞լ եք ձեր ամուսնուց/կնոջից կամ զուգընկերոջից, որպեսզի խաղաք:		
13	Երբևէ պարտքով դրամ վերցրե՞լ եք ձեր այլ բարեկամներից կամ խնամիներից, որպեսզի խաղաք:		
14	Երբևէ բանկից, վարկային ընկերությունից կամ միությունից ստացե՞լ եք ապառիկ դրամ, որպեսզի խաղաք կամ վճարեք խաղամոլության ձեր պարտքերը:		
15	Երբևէ հանե՞լ եք կանխիկ դրամ քրեդիտ քարտերից, ինչպիսիք են Visa կամ MasterCard, որպեսզի խաղաք կամ վճարեք խաղամոլության ձեր պարտքերը: (Բացառությամբ ATM քարտերի:)		
16	Երբևէ ստացե՞լ եք ապառիկ դրամ վարկային վաշխառուից (loan shark), որպեսզի խաղաք կամ վճարեք խաղամոլության ձեր պարտքերը:		
17	Երբևէ ակցիաների, պարտատոմսերի կամ այլ արժեթղթերի դիմաց ստացե՞լ եք կանխիկ դրամ, որպեսզի խաղաք:		
18	Արդյոք վաճառե՞լ եք անձնական կամ ընտանեկան ունեցվածք, որպեսզի խաղաք կամ վճարեք խաղամոլության ձեր պարտքերը:		
19	Երբևէ պարտքով դրամ վերցրե՞լ եք ձեր հաշվից՝ գրելով անվավեր չեկեր, որպեսզի խաղաք կամ վճարեք խաղամոլության ձեր պարտքերը:		
20	Կարծու՞մ եք, որ դուք երբևէ դրամով գրազի կամ խաղամոլության խնդիր եք ունեցել:		

Արդյունքների մեկնաբանությունը

Միավորները հաշվարկելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր «այո» պատասխանի համար հաշվել մեկ միավոր: Եթե ստացվել է՝

- 0՝ խնդիր չկա. խաղամոլության բացակայություն
- 1-4՝ թեթև կամ միջին խնդիր. խաղամոլության թեթև կամ միջին մակարդակ
- 5-20՝ նշանակալից խնդիր. խաղամոլության ծանր մակարդակ:

Աղբյուրները

- Fong, T.W. & Rosenthal, R.J. (2008). *Ձերբազատում՝ պրոբլեմային խաղամոլությունից. Ինքնօգնության ձեռնարկ*. Տարբերակ 1.1: UCLA Gambling Studies Program, California Office of Problem and Pathological Gambling Department of Alcohol and Drug Programs, State of California, Մարտ 2008: http://uclagamblingprogram.org/treatment/wb/ARM_WB.pdf
- Lesieur, H. & Blume, S. (1987). The South Oaks Gambling Screen (SOGS): A New Instrument for the Identification of Pathological Gamblers. *Am J Psychiatry* 144(9):1184-8.